Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
դեկտեմբերի 24-ի N 1527 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆՑ ԸՆՏՐԱԾ ԲՈՒԺՈՂ ԲԺԻՇԿՆԵՐԻՆ ԿԱՄ ԱՅԼ ԲԺԻՇԿ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ ՈՐՊԵՍ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների (այսուհետ՝ հանձնաժողով) կողմից իրականացվող փորձաքննություններին փորձաքննություն անցնող անձանց կողմից իրենց ընտրած բուժող բժիշկներին կամ այլ բժիշկ մասնագետներին որպես ներկայացուցիչ ներգրավելու հետ կապված հարաբերությունները:

2. Հանձնաժողովի կողմից իրականացվող փորձաքննություններին փորձաքննվող անձանց կողմից իրենց ընտրած բուժող բժիշկներին կամ այլ բժիշկ մասնագետներին որպես ներկայացուցիչ ներգրավելու հնարավորության մասին փորձաքննվող անձը կամ նրա օրինական ներկայացուցիչն իրազեկվում է բժշկասոցիալական փորձաքննության դիմումը ներկայացնելիս:

3. Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողով դիմելուց հետո եռօրյա ժամկետում փորձաքննվող անձը կամ նրա օրինական ներկայացուցիչը հանձնաժողովին տրամադրում է (գրավոր և (կամ) էլեկտրոնային փոստով և (կամ) հեռախոսազանգով) իր ներկայացուցչի տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, պաշտոնը, մասնագիտացումը, աշխատանքի վայրը, մշտական բնակության վայրի հասցեն, հեռախոսահամարը):

4. Բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ փորձաքննվող անձի ներկայացուցիչն ունի օրենքով իրեն վերապահված իրավունքներ և պարտականություններ:

5. Փորձաքննվող անձի ներկայացուցչի մասնակցությունն անձի փորձաքննությանը գրանցվում է այդ նպատակի համար նախատեսված լիազոր մարմնի կողմից հաստատված գրանցամատյանում և ստորագրվում նրա կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ